ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

24 հոկտեմբերի 2018 թ. № 138 - Ա/1

ք. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի № 83-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 34-րդ հոդվածի 1-ինից 3-րդ մասերի՝ *հրամայում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2016 թվականի մայիսի 4-ի ««100 գաղափար Հայաստանի համար» համահայկական երիտասարդական մրցույթի անցկացման կարգը, անվանակարգերը և հայտի ձևը հաստատելու մասին» № 83-Ա/1 հրամանի № 1 հավելվածի 7-րդ կետում «գիտության և նորարարության ոլորտներին առնչվող Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունները» բառերը փոխարինել «գիտության և նորարարության ոլորտներին առնչվող Հայաստանի Հանրապետությունում գործող կազմակերպությունները» բառերով:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

09 սեպտեմբեր 2017 թ. № 153 - Ա/1

ք. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի № 83-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի՝ *հրամայում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2016 թվականի մայիսի 4-ի ««100 գաղափար Հայաստանի համար» հանրապետական երիտասարդական մրցույթի անցկացման կարգը, անվանակարգերը և հայտի ձևը հաստատելու մասին» № 83-Ա/1 հրամանում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) հրամանում «հանրապետական» բառը փոխարինել «համահայկական» բառով,

2) հրամանի № 1 հավելվածի 1-ին կետը «(այսուհետ՝ Նախարարություն)» բառերից հետո լրացնել «՝ Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության հետ համագործակցությամբ» բառերով,

3) հրամանի № 1 հավելվածի 7-րդ կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «Կազմկոմիտեն բաղկացած է տասը անդամներից, որոնք ներկայացնում են պետական կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, գիտության և նորարարության ոլորտներին առնչվող Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունները:»,

4) հրամանի № 1 հավելվածի 21-րդ կետը «պորտալում,» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության www.mindiaspora.am պաշտոնական կայքում, այն մարմինների և կազմակերպությունների կայքերում, որոնց ներկայացուցիչները Կազմկոմիտեի անդամ են,» բառերով,

5) հրամանի № 1 հավելվածի 22-րդ կետը «նախարարություն» բառից հետո լրացնել «կամ erit.msy@gmail.com» էլեկտրոնային հասցեով» բառերով,

6) հրամանի № 1 հավելվածի 24-րդ կետը «պորտալում» բառից հետո լրացնել «, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության www.mindiaspora.am պաշտոնական կայքում» բառերով,

7) հրամանի № 1 հավելվածի 25-րդ կետի «16-30 տարեկան» բառերը փոխարինել «Հայաստանի և սփյուռքի 16-35 տարեկան» բառերով,

8) հրամանի № 1 հավելվածի 31-րդ կետը «պարբերականում» բառից հետո լրացնել «, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության www.mindiaspora.am պաշտոնական կայքում» բառերով,

9) հրամանի № 1 հավելվածի 36-րդ կետի 3-րդ ենթակետը առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ նոր նախադասությամբ. «Սփյուռքահայ հեղինակները (հեղինակային խմբերը) իրենց նախագծերը կարող են ներկայացնել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ:»:

Հ. ՌՈՍՏՈՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

04 Դեկտեմբեր 2016 թ. № 83 - Ա/1
ք. Երևան

## «100 ԳԱՂԱՓԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ» ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՆՎԱՆԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՀԱՅՏԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թ. հուլիսի 12-ի № 825-Ն որոշման № 1 հավելվածի 11-րդ կետի 4-րդ ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թ. դեկտեմբերի 25-ի նիստի № 54 արձանագրային որոշումը՝ հրամայում եմ.

1. Հաստատել «100 գաղափար Հայաստանի համար» հանրապետական երիտասարդական մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) անցկացման կարգը՝ համաձայն № 1 հավելվածի:
2. Հաստատել Մրցույթի անվանակարգերը՝ համաձայն № 2 հավելվածի:
3. Հաստատել Մրցույթի հայտի ձևը՝ համաձայն № 3 հավելվածի:

Գ. ՂԱՋԱՐՅԱՆ

Հավելված № 1
Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարի
2016 թվականի Հունիսի 4 -ի
№ 83 -Ա/1 հրամանի

# ԿԱՐԳ
# «100 ԳԱՂԱՓԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ» ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «100 գաղափար Հայաստանի համար» նորարարական նախագծերի և գիտատեխնիկական մշակումների հանրապետական երիտասարդական մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ) կազմակերպում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

2. Մրցույթի կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է Մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը, նպատակները և խնդիրները, Մրցույթի կազմկոմիտեի և Մրցույթի փորձագիտական հանձնաժողովի ձևավորման կարգը, գործառույթները, Մրցույթի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, նորարարական նախագծերի ձևավորման պահանջները, նախագծերի ներկայացման կարգը, Մրցույթի իրականացման փուլերը, նախագծերի գնահատման չափանիշները և Մրցույթի արդյունքների ամփոփման կարգը, ֆինանսավորման հնարավոր աղբյուրները:

## II. ՄՐՑՈՒՅԹԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Մրցույթն անցկացվում է երիտասարդների նորարարական մտածողությունը զարգացնելու, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծման գործընթացներում երիտասարդներին ներգրավելու, գիտատեխնիկական մշակումներ և նորարարական նախագծեր իրականացնելու քաղաքացիական նախաձեռնությունների խթանման նպատակով:

4. Մրցույթի հիմնական խնդիրներն են՝

1) երիտասարդական գյուտարարության, նորարարության խթանումը և զարգացումը.

2) երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար գործնական նշանակություն ունեցող նորարարական նախագծերի և գիտատեխնիկական մշակումների հայտնաբերումը և հնարավոր ներդրումը.

3) սոցիալական և հասարակական կարևոր խնդիրների լուծման գործընթացներում հասարակական միավորումների, տնտեսվարող սուբյեկտների և կառավարման պետական մարմինների միջև բոլոր մակարդակներում համագործակցության կատարելագործումը.

4) երիտասարդության սոցիալական գործընկերության և փոխադարձ պատասխանատվության սկզբունքների ներդրումը պրակտիկայում.

5) երիտասարդների նորարարական նախագծերի և գիտատեխնիկական մշակումների հանրայնացումը և իրագործմանն աջակցությունը:

## III. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԿՈՄԻՏԵՆ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

5. Մրցույթի անցկացման համար ստեղծվում է Մրցույթի կազմկոմիտե (այսուհետ՝ Կազմկոմիտե) և Մրցույթի փորձագիտական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

6. Կազմկոմիտեի և Հանձնաժողովի անդամներն ընտրվում են մեկ տարի ժամկետով:

7. Կազմկոմիտեն բաղկացած է տասը անդամից, որոնցից հինգը ներկայացնում են պետական կառավարման մարմինները, իսկ հինգը՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, գիտության և նորարարության ոլորտներին առնչվող Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունները: Կազմկոմիտեի և Հանձնաժողովի կազմերը հաստատվում են Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի հրամանով՝ համաձայնեցված այն պետական մարմինների հետ, որոնց ներկայացուցիչներն ընդգրկվելու են Կազմկոմիտեի և Հանձնաժողովի կազմերում:

8. Կազմկոմիտեի նախագահը Նախարարության երիտասարդական քաղաքականության ոլորտը համակարգող նախարարի տեղակալն է:

9. Կազմկոմիտեն սահմանում է Մրցույթի հայտերի ընդունման և մրցույթի արդյունքների հրապարակման ժամկետները և Կարգում ամրագրված դրույթներին համապատասխան մշակում և հաստատում է հայտերի գնահատման և հաղթողների որոշման կարգը:

10. Կազմկոմիտեն ընդունում, գրանցում և Հանձնաժողովի քննարկմանն ու գնահատմանն է ներկայացնում իր կողմից ընդունված Մրցույթի հայտերը:

11. Կազմկոմիտեն կազմակերպում է փորձագիտական խորհրդի նիստը և Մրցույթի նախագծերի ցուցահանդեսը, ամփոփում և հրապարակում է Մրցույթի արդյունքները:

12. Կազմկոմիտեն անհրաժեշտության դեպքում նախագծերի հեղինակների համար անցկացնում է նախագծերի ներկայացման դասընթացներ:

13. Կազմկոմիտեն Մրցույթի բոլոր փուլերում կազմակերպում է զանգվածային լրատվության և հեռահաղորդակցության միջոցներով Մրցույթի լայն լուսաբանումը:

14. Կազմկոմիտեն պատասխանատվություն է կրում Մրցույթի բնականոն կազմակերպման և թափանցիկության ապահովման համար:

15. Հանձնաժողովը կազմված է տասը փորձագետներից, որոնք ընտրվում են Կազմկոմիտեի կողմից՝ համաձայն ներկայացված հայտերի և/կամ Կազմկոմիտեի կողմից հրավիրվում են ընդգրկվելու Հանձնաժողովի կազմում:

16. Անհրաժեշտության դեպքում հայտն ուղարկվում է լրացուցիչ մասնագիտական փորձաքննության

17. Միևնույն անձը չի կարող լինել և՛ Կազմկոմիտեի անդամ, և՛ Հանձնաժողովի անդամ:

18. Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել պետական կառավարման համապատասխան մարմինների, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի, ոլորտային տնտեսվարող սուբյեկտների և հասարակական միավորումների ներկայացուցիչներ, փորձագետներ:

19. Հանձնաժողովը, առաջնորդվելով Կարգով, իրականացնում է մրցութային հայտերի փորձագիտական գնահատումը:

## IV. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

20. Մրցույթն անցկացվում է ամեն տարի:

21. Մրցույթի անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը (Մրցույթի անցկացման կարգը, անվանակարգերը, հայտի ձևը, հայտերի ընդունման ժամկետները և կարգը, հայտերի գնահատման և հաղթողների որոշման կարգը, Մրցույթի արդյունքների հրապարակման կարգը և ժամկետը) Կազմկոմիտեի կողմից հրապարակվում է զանգվածային լրատվական միջոցներում, Նախարարության www.msy.am պաշտոնական կայքում և www.erit.am երիտասարդական պորտալում, «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում:

22. Մրցույթի հայտերը, ըստ հաստատված ձևի, ներկայացվում են Կազմկոմիտե՝ հետևյալ հասցեով՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Աբովյան 9, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

23. Կարգի պահանջների և Կազմկոմիտեի կողմից նախանշված ժամկետների խախտումներով ներկայացված հայտերը չեն ընդունվում:

24. Հայտերի փորձագիտական գնահատման արդյունքները, Մրցույթի եզրափակիչ փուլ անցած նախագծերի և Մրցույթի արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում են Նախարարության www.msy.am պաշտոնական կայքում և www.erit.am երիտասարդական պորտալում՝ համապատասխանաբար Մրցույթի եզրափակիչ փուլ անցած նախագծերի և Մրցույթի արդյունքների ամփոփման վերաբերյալ Կամկոմիտեի որոշումներից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում: Մրցույթի եզրափակիչ փուլ անցած մասնակիցները և հաղթողները գրավոր տեղեկացվում են Մրցույթի Կազմկոմիտեի կողմից:

## V. ՄՐՑՈՒԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԵՎ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

25. Մրցույթին կարող են մասնակցել Կարգի պահանջներին համապատասխան և ըստ հաստատված ձևի իրենց հայտերը ներկայացրած 16-30 տարեկան երիտասարդներ՝ անհատապես և/կամ հեղինակային խմբով:

26. Հայտին կցվում է՝ նորարարական նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ)՝ թղթային և էլեկտրոնային կրիչով՝ Word Document (մինչև 10 (տասը) էջ) և Power Point Presentation (մինչև 25 լուսապատկեր՝ սլայդ):

27. Յուրաքանչյուր Նախագծին կցվում է տվյալ նախագծի համառոտ ամփոփագիրը՝ մինչև մեկ էջ:

28. 27. Չեն բացառվում էլեկտրոնային ներկայացման այլ հավելյալ միջոցներ՝ վիդեո, աուդիո նյութեր, գրաֆիկական սխեմաներ, համակարգչային ծրագրեր և այլն:

29. Նախագծերին ներկայացվող պահանջներն են՝

1) թեմայի արդիականությունը և Նախագծի գործնական նշանակությունը.

2) Նախագծի իրականացման իրատեսականությունը.

3) գաղափարի նորույթը կամ ներկայացված խնդրի լուծման մոտեցումների նորարարականությունը.

4) Նախագծի նպատակների, խնդիրների հստակությունը և տրամաբանական հիմնավորվածությունը և դրանց հասնելու ուղիների հստակությունը.

5) թեմայի վերաբերյալ հեղինակային հայեցակարգերի և գործնական հանձնարարականների յուրօրինակությունը:

30. Լրացուցիչ առավելություն են ստանում ցուցադրական նյութով (տեսահոլովակ, մանրակերտ, նմուշներ և այլն) ներկայացված աշխատանքները.

31. Կազմկոմիտեի կողմից ընդունված բոլոր հայտերի Նախագծերի ամփոփագրերը հրապարակվում են Նախարարության www.msy.am պաշտոնական կայքում և www.erit.am էլեկտրոնային պարբերականում:

## VI. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

32. Մրցույթի մասնակիցն իրավունք ունի՝

1) ստանալու տեղեկատվություն իր հայտի փորձագիտական գնահատման վերաբերյալ,

2) բողոքարկելու հայտի փորձագիտական գնահատման արդյունքները՝ դրանց հրապարակումից հետո մեկ օրվա ընթացքում՝ ներկայացնելով գրավոր դիմում Նախարարություն:

33. Մրցույթի մասնակիցը պարտավոր է՝

1) ներկայացնել Մրցույթի հայտը՝ համաձայն սահմանված պահանջների.

2) փորձագիտական նախնական գնահատման արդյունքում իր նախագծի եզրափակիչ փուլ անցնելու պարագայում մասնակցել Մրցույթի ցուցահանդես-ներկայացմանը՝ Հանձնաժողովին ներկայացնելով իր նախագիծը և Հանձնաժողովի նիստում հանդես գալ իր նախագծի պաշտպանությամբ:

## VII. ՄՐՑՈՒՅԹԻ ՓՈՒԼԵՐԸ

34. Մրցույթն անցկացվում է երկու փուլով:

*35. Առաջին փուլ: Իրազեկում հնարավոր մասնակիցներին Մրցույթի անցկացման վերաբերյալ, հայտերի ընդունում Կազմկոմիտեի կողմից և ներկայացում Հանձնաժողովին՝ գնահատման, Հանձնաժողովի նիստ:*

1) Ապահովվում է Մրցույթի վերաբերյալ տեղեկատվական նյութերի տեղադրումը զանգվածային լրատվության և հեռահաղորդակցության միջոցներում՝ կոնտակտային անձանց, Մրցույթին մասնակցելու կարգի, Մրցույթի հայտերի ընդունման, հայտի ձևի և

լրացման կանոնների մասին տեղեկատվությամբ, Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում կազմակերպվում են Մրցույթի վերաբերյալ տեղեկատվական հանդիպումներ և այլն:

2) Մրցույթին մասնակցել ցանկացողները հայտերը՝ ըստ հաստատված ձևի, ներկայացնում են Կազմկոմիտե:

3) Սահմանված պահանջներին չհամապատասխանող հայտերը չեն ընդունվում:

4) Ընդունված բոլոր հայտերն ուղարկվում են Հանձնաժողովին գնահատման:

*36. Երկրորդ՝ եզրափակիչ փուլ: Նախագծերի նախնական գնահատում, Մրցույթի նախագծերի ցուցահանդես: Նախագծերի պաշտպանություն Հանձնաժողովում: Հայտերի վերջնական գնահատում և հաղթողների որոշում:*

1) Կազկոմիտեի ուղարկած բոլոր նախագծերը Հանձնաժողովը խմբավորում է ըստ հաստատված անվանակարգերի, քննարկում և նախնական գնահատում:

2) Անհրաժեշտության դեպքում հեղինակների համար կազմակերպվում են նախագծերի ներկայացման դասընթացներ:

3) Կազմակերպվում է ըստ Հանձնաժողովի նախնական գնահատումների լավագույն նորարարական նախագծերի և գիտատեխնիկական մշակումների ցուցահանդես-ներկայացում, ապա Հանձնաժողովի նիստ, որտեղ տեղի է ունենում նախագծերի պաշտպանություն (ներկայացման ձևով) հեղինակների (հեղինակային խմբերի) կողմից:

4) Հանձնաժողովի նիստի ավարտին Հանձնաժողովը ըստ հաստատված անվանակարգերի հրապարակում է նախագծերի վերջնական գնահատականները և ներկայացնում դրանք Կազմկոմիտեին:

5) Կազմկոմիտեն ամփոփում է Հանձնաժողովի գնահատականները և որոշում Մրցույթի հաղթողներին ըստ հաստատված անվանակարգերի, հրապարակում Մրցույթի արդյունքները, կազմակերպում Մրցույթի հաղթողների պարգևատրման և մասնակիցներին հավաստագրերի հանձնման հանդիսավոր արարողությունը:

## VIII. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

37. Մրցույթի հայտ ներկայացնելիս մասնակիցը հաստատում է իր համաձայնությունն առ այն, որ Մրցույթի կազմակերպիչն իրավունք ունի օգտագործելու հայտով ներկայացված նախագծի կամ գիտատեխնիկական մշակման նյութերը (միայն ամփոփ տեսքով՝ առանց հրապարակելու նախագծի կամ գիտատեխնիկական մշակման տեխնիկական չափանիշները) հրապարակման միջոցով՝ համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության:

38. Մրցույթի կազմակերպիչները երաշխավորում են չհրապարակել և Կազմկոմիտեի ու Հանձնաժողովի անդամների կողմից չօգտագործել մտավոր սեփականության արտոնագիր չունեցող նախագծերի տեխնիկական առանձնահատկությունները՝ դրանով իսկ չխախտելով Մրցույթի մասնակցի հեղինակային իրավունքները:

39. Մրցույթին մասնակցելու իրողությունը ենթադրում է, որ մասնակիցներն արտահայտում են անվերապահ համաձայնություն առ այն, որ իրենց անունները, ազգանունները և Մրցույթի մասնակցության հետ կապված իրենց պատկերով լուսանկարչական նյութերը, ինչպես նաև հարցազրույցները և Մրցույթի մասնակիցների վերաբերյալ այլ նյութերը կարող են օգտագործվել Մրցույթի կազմակերպիչների կողմից

գովազդային և այլ առևտրային նպատակներով անսահմանափակ ժամկետում և առանց որևէ հատուցման:

## IX. ՄՐՑՈՒԹԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

40. Մրցույթի ֆինանսավորումն իրականացվում է երիտասարդական պետական քաղաքականության իրականացման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներով:

41. Մրցույթի եզրափակիչ փուլի միջոցառումներին (Հանձնաժողովի նիստ և Մրցույթի լավագույն նորարարական նախագծերի և գիտատեխնիկական մշակումների ցուցահանդես-ներկայացում, Մրցույթի հաղթողների պարգևատրման և մասնակիցներին հավաստագրերի հանձնման հանդիսավոր արարողություն) մասնակցելու համար նախագծերի հեղինակների գործուղման ծախսերը (սնունդ և կեցություն) իրականացվում են կազմակերպչի հաշվին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված միջոցների ներգրավմամբ:

42. Մրցույթի եզրափակիչ փուլի կազմակերպման հարցերը, այդ թվում տեխնիկական, ցուցահանդեսային և ձայնաուժեղացման սարքավորումների ապահովումը, կամավորների աշխատանքը և այլն, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ չարգելված ռեսուրսների ներգրավմամբ:

43. Մրցույթի առանձին փուլերի ֆինանսավորման նպատակով կազմակերպիչն իրավունք ունի որպես հովանավորների ներգրավելու այլ կազմակերպությունների (այդ թվում՝ առևտրային):

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԷԼՈՅԱՆ

Հավելված № 2
Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարի
2016 թվականի Դեկտեմբերի 4 -ի
№ 83 -Ա/1 հրամանի

# ԱՆՎԱՆԱԿԱՐԳԵՐ
# «100 ԳԱՂԱՓԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ» ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

1. Ֆիզիկա-մաթեմատիկական գիտություններ
2. Քիմիական գիտություններ
3. Կենսաբանական գիտություններ
4. Տեխնիկական գիտություններ
5. Գյուղատնտեսական գիտություններ
6. Պատմական գիտություններ
7. Տնտեսագիտություն
8. Բանասիրական գիտություններ
9. Իրավաբանական գիտություններ
10. Մանկավարժական գիտություններ
11. Բժշկական գիտություններ
12. Դեղագործական գիտություններ
13. Արվեստագիտություն
14. Ճարտարապետություն
15. Հոգեբանական գիտություններ
16. Ռազմական գիտություններ
17. Սոցիոլոգիական գիտություններ
18. Քաղաքական գիտություններ
19. Գիտություններ Երկրի մասին
20. Տեղեկատվական տեխնոլոգիաներ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԷԼՈՅԱՆ

Հավելված № 3
Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարի
2016 թվականի Հոկտեմբերի 4 -ի
№ 23 -Ա/1 հրամանի

ՁԵՎ

# ՀԱՅՏ
# «100 ԳԱՂԱՓԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ»
# ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

1. Նորարարական նախագծի անվանումը

2. Նորարարական նախագծի հեղինակ(ներ)ը (աշխատանքի/ուսման վայրը, պաշտոնը (կուրս, դասարան, խումբ և այլն), հեռախոսահամարներ, էլեկտրոնային փոստ, փոստի հասցե տվյալների փոխանակման համար, այլ տեղեկություններ)

3. Նորարարական նախագծի նկարագրությունը, արդիականությունը, նորույթը և յուրօրինակությունը

4. Նորարարական նախագծի իրականացմամբ լուծվելիք խնդիրները և նպատակը

5. Նորարարական նախագծի տեխնիկական, տնտեսական, սոցիալական և այլ առավելությունները

6. Մտավոր սեփականության պաշտպանության մասին տեղեկություն (արտոնագրի առկայություն)

| |
|---|
| |

7. Նորարարական նախագծի զարգացման ընթացիկ փուլը (նկարագրությամբ)

1) Հետազոտության անցկացում, փորձեր, նախնական փորձարկումներ և այլն

2) Իրականացված է փորձարարա-կոնստրուկտորական (տեխնոլոգիական, գործնական և այլ) աշխատանք

3) Մշակված է մեթոդ, փաստաթղթային հիմնավորում (բիզնես պլան, տեխնոլոգիական քարտ և այլն)

4) Իրականացման փուլում է (փորձնական խմբաքանակի թողարկում, նախապատրաստական աշխատանքներ և այլն)

5) Այլ (պարզաբանումներով)

| |
|---|
| |

8. Առաջարկություններ նորարարական նախագծի հետագա իրագործման համար (հիմնավորմամբ)

| |
|---|
| |

Լրացման ամսաթիվը _____ 20____ թ.

Հայտատուի ստորագրությունը _____

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԷԼՈՅԱՆ